Միջկառավարական հանձնաժողովներ, որոնց գործունեությունը համակարգվում է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից

<u>Հայ - բելառուսական միջկառավարական հանձնաժողով</u>

Տնտեսական համագործակցության հարցերով հայ-բելառուսական միջկառավարական համատեղ հանձնաժողովը հիմնվել է համաձայն 2000 թ. հունվարի 18-ին կնքված «ՀՀ կառավարության և ԲՀ կառավարության միջև ազատ առևտրի մասին» Համաձայնագրի: Հայկական կողմից հանձնաժողովի համանախագահն է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարար Ն. Երիցյանը, բելառուսական կողմից՝ ԲՀ էկոնոմիկայի նախարար Ն. Զայչենկոն:

Տնտեսական համագործակցության հարցերով հայ-բելառուսական միջկառավարական համատեղ հանձնաժողովի հայկական մասի անհատական նոր կազմը հաստատվել է ՀՀ վարչապետի 2005 թ. նոյեմբերի 30-ի N 944-Ա որոշմամբ:

Հանձնաժողովի առաջին նիստն անցկացվել է 2000 թ. հունվարի 18-20-ը՝ Մինսկում, երկրորդ նիստը՝ 2000 թ. հոկտեմբերի 30-31-ը՝ Երևանում, երրորդ նիստը՝ 2001 թ. ապրիլի 27-ին՝ Մինսկում, չորրորդը՝ 2002 թ. հոկտեմբերի 28-30-ը՝ Մինսկում, հինգերորդը՝ 2003 թ. հոկտեմբերի 6-7-ը՝ Երևանում, վեցերորդը՝ 2004 թ. հոկտեմբերի 21-22-ը Մինսկում:

Վեցերորդ համատեղ նիստի ընթացքում քննարկվել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր: Մասնավորապես՝

- «ԲելԱռ Առևտրի տուն» ՓԲԸ-ի գործունեության ակտիվացում,
- Հայաստանի և Բելառուսի գործարարների միությունների միջև համագործակցության զարգացում,
- ապրանքաշրջանառության ծավալների մեծացմանն ուղղված միջոցների մշակում,
- Հայաստանի եւ Բելառուսի միջև միջմարզային, ինչպես նաև զբոսաշրջության, էներգետիկայի, տրանսպորտի և գյուղատնտեսության ոլորտներում համագործակցության զարգացման հեռանկարներ և այլն:

Նիստի արդյունքում, բացի Արձանագրությունից, ստորագրվել են նաև.

- «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի և Բելառուսի Հանրապետության Մինսկի շրջգործկոմի միջև առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության մասին» Համաձայնագիրը և
- «ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության և ԲՀ մշակույթի նախարարության միջև 2005-2007 թթ. մշակութային համագործակցության մասին Ծրագիրը:

Հայ - ուկրաինական միջկառավարական հանձնաժողով

Տնտեսական համագործակցության հարցերով հայ-ուկրաինական միջկառավարական համատեղ հանձնաժողովը հիմնվել է համաձայն 1994 թ. հոկտեմբերի 7-ին կնքված «ՀՀ կառավարության և Ուկրաինայի կառավարության միջև ազատ առևտրի մասին» Համաձայնագրի: Հայկական կողմից հանձնաժողովի համանախագահն է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարար Ն. Երիցյանը:

Հայ-ուկրաինական միջկառավարական համատեղ հանձնաժողովի հայկական մասի անհատական նոր կազմը հաստատվել է ՀՀ վարչապետի 2004 թ. մայիսի 7-ի N 302-Ա որոշմամբ:

Համատեղ հանձնաժողովի անդրանիկ նիստը կայացել է 1999 թ. հուլիսի 20-ին Կիևում, երկրորդը՝ 2001 թ. փետրվարի 20-ին Երևանում, իսկ երրորդը՝ 2004 թ. մայիսի 11-13-ը Կիևում:

Երրորդ համատեղ նիստի ընթացքում ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ համագործակցության ուղղությունների վերաբերյալ: Մասնավորապես, քննարկվել են՝ հայ-ուկրաինական առևտրատնտեսական համագործակցության ներկա վիճակը, համագործակցության հնարավորությունները արդյունաբերության, տրանսպորտի, զբոսաշրջության, էներգետիկայի, հարկային և մաքսային, առողջապահության, գիտության և կրթության, մշակույթի բնագավառներում:

Հայ-ավստրիական միջկառավարական հանձնաժողով

Հայ-ավստրիական միջկառավարական հանձնաժողովը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության և Ավստրիայի կառավարության միջև 1994թ. ապրիլի 26-ին կնքված երկկողմ արտաքին տնտեսական կապերի մասին Համաձայնագրի հիման վրա:

Հայկական կողմից հանձնաժողովի համանախագահն է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ Տ. Դավթյանը, ավստրիական կողմից՝ Ավստրիայի Տնտեսության և աշխատանքի դաշնային նախարարության արտաքին տնտեսական կապերի գլխավոր տնօրեն Յո. Զաքսը:
Հանձնաժողովի անդրանիկ նիստը տեղի ունեցավ 2002թ. փետրվարի 27-ին՝ Վիեննայում:

2005 թվականի օգոստոսի 21-24-ը Երևանում տեղի ունեցավ հայ-ավստրիական առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության խառը հանձնաժողովի երկրորդ նիստը:

Հանձնաժողովի երրորդ նիստը տեղի ունեցավ 2007թ. մարտի 7-ին՝ Վիեննայում:

Նիստի ընթացքում քննարկվել են երկու երկրների տնտեսական համագործակցության ընդհանուր վիճակը, առկա խնդիրները, ինչպես նաև երկկողմ առևտրատնտեսական կապերի ընդլայնման, համագործակցության զարգացման նոր ուղղությունները: Մասնավորապես՝ ՏՏ, ՓՄՁ, զբոսաշրջության, ուսումնական ծրագրերի, բանկային ծառայությունների ոլորտներում:

Նիստի արդյունքում ստորագրվել է հայ-ավստրիական առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության խառը հանձնաժողովի երրորդ նիստի եզրափակիչ ***Արձանագրությունը:***